## Ծառայությունից օգտվելու կանոններ

• Մոբայլ-բանկինգ ծառայությունից օգտվելու համար Հաճախորդը պետք է ունենա Android կամ iOS օպերացիոն համակարգով աշխատող սարքին վիճակում գտնվող սարքավորում (բջջային հեռախոս, սմարտֆոն, պլանշետ):

• Հաճախորդի սարքավորումը պետք է միացված լինի ինտերնետին (Մոբայլբանկինգ ծառայությունը չի մատուցվում ինտերնետ կապի բացակայության պայմաններում):

• Մոբայլ-բանկինգ ծառայությունն ակտիվացվում է Հաճախորդի՝ Բանկի գլխամասային գրասենյակում կամ ցանկացած մասնաճյուղում գրված համապատասխան դիմումի հիման վրա:

• Հաճախորդը ինքնուրույն ներբեռնում է բջջային ծրագիրը համապատասխան հրահանգների միջոցով, որից հետո մուտք է գործում ծրագրի տարբերանշանով հավելվածը:

• Հավելվածում Հաճախորդը մուտքագրում է Բանկի կողմից տրամադրված «օգտանուն» և «գաղտնաբառ» տվյալները:

• Բանկի կողմից տրված գաղտնաբառն օգտագործվում է միայն առաջին մուտքի ժամանակ, որից հետո Հաճախորդը պարտավոր է սահմանել նոր գաղտնաբառ:

• Հաճախորդը Մոբայլ-բանկինգ ծրագրով համապատասխան գործարքները կատարում է և վճարման հանձնարարականներն ուղարկում է բջջային հավելվածի միջոցով համապատասխան հրահանգներ կատարելու միջոցով:

• Բջջային ծրագրից օգտվելու կանոնները և ուղեցույցը կարող են տրամադրվել են Հաճախորդին թղթային տարբերակով՝ վերջինիս կողմից այդպիսի ցանկություն հայտնելու դեպքում: